

# ՄԵՇ ՅՈՒԲԵԼԵԱՆԸ

๐ ๐ ๐

ՄԱՅՐԱՖԱՂԱՔԻՍ ՄԷԶ

Յորելեանական կեզր. Յանձնափուրը Մեծ Յորելեանի ժամին իր կազմած էրագիրը Աղջ. Վարչութեան վաւերացման ենթարկած ըլլալով Խառն ժողովը երեկո նկատի առաջ զայն և վաւերացուց մէկ մասին յապաւումովը: Վարչութիւնը պարագաներով բերումով յարմար չդատելով ջնջեց ծրագրին թարօրի և զիշերային ջահագնացութեան մասերը: Որոշուեցաւ պաշտօնագիրով մը դիմում կատարել անմիջապէս պառկանեալ պաշտօնատան մօա և հրահանց ուղղել տալ ոստիկանութեան որ ուրբաթէն մինչեւ կիրակի զիշեր տեղի ունենալիք հանդիսութեանց և կատարուող հան զան կութեան դէմ արգելքներ չյարուցուին և միջամտութիւններ չըլլան:

Այս առթիւ որոշուեցաւ որ հանդէսներուն մասն ակցին իւրաքտնչիւր վարժարանի բարձրագոյն դասընթացքէն Յական աշակերտ: Հանդէսին պիտի հրաւիրուին բոլոր նախարարները և պետական բարձրաստիճան պաշտօնատարները: Հանդէսին նպատակը բացատրող գրքոյլ մը պիտի հրատարակուի: Ենի Գարուի թաղ. Խորհուրդը թաղին երիտասարդութեան հետ միացած մեծ Յորելեանի տօներուն առթիւ կազմակերպած է կարգադիր Մասնախումբ մը որ մեծ փութով գործի ձեռնարկած է յիշատակելի փայլ մը տալու համար տեղական հանդէսին: Եկեղեցական հանդիսաւոր արտօնութենէ վերջ հաւաքոյթը տեղի պիտի ունենայ Գարեգին աղայի ծովանայեաց մեծ պարտէզին մէջ. պիտի ատենախոսէ Տիգար Հմայեակ Արամեանց: Օր. Ազնիւ Սերոբեանի ընտրեալ նուազախումբը մէջ ընդ մէջ պիտի նուազէ ազգային և եւրոպական նշանաւոր կառուներ. Եկեղեցական և ուսուցչական ու զպրաց զասերէն ներկայացուցիչներ խնամուած ճառելով պիտի մասնակցին, և արական երգչախումբ մը եւս պիտի երգէ: «Շարժում» լսարանական ժիութիւնը գեղեցիկ թատերախաղով մը զուարթութիւնը պիտի աւելցնէ: Խոկ ի նպաստ կըրթական ֆօնտին, Կարգադիր մասնախումբը Ս. Սահակյ և Ս. Մեսրոպայ մեծագիր պատկերները գեղարուեստական և խնամուած տպագրութեամբ ընտիր թուղթի վրայ միացնելով պիտի բաժնէ հասարակութեան, սահմանական նուէրները:

ԳԱԻԱՌԻ ՄԷԶ

.ԶՄԻԹ, 1/14 հոկտ. 1913

Հայկ. տառերու գիւտին 1500 և տպագրութեան 400ամեայ համազգային մէծ յորելեանը վայելուզ հանդիսաւորութեամբ տօնելու համար քաղաքիս մէջ ևս Բարեգրծ. Ընկերութեան նախաձեռնութեամբ կազմուած է Յորելեանական Յանձնախումբ մը, երկուտամնեակ մը անդամներէ բաղկացեալ:

Կը տեղեկանամ թէ յիշեալ յանձնախումբը իր առաջին նիստին մէջ որոշած է ամսոյս 13ի կիրակին սարքել լսարան-հանդէս մը ազգ. նորաշէն թատերարանին մէջ, ուր խօսելու պիտի հրաւիրուին հայ յարանուանութեանց ներկայացուցիչներ, ազգ. վարժարանի ուսուցչական խումբին մէկ անդամը և ժողովրդեան կողմէ ձեռնաս անձնաւորութիւններ: Կը լսեմնաեւ թէ Յանձնախումբը դպրոցական Յօնիսին ի նպաստ գաւառիս մէջ հանգանակութեան մը ձեռնարկելու ծրագիրն ալ մշակել առաջարած է:

Այս առթիւ թերեւս աւելորդ չպիտի ըլլայ շեշտել որ հակառակ Աղջ. Պատրիարքարանի կրկնակ շրջաբերականներուն, տեղոյս ազգ. պաշտօնական մարմինները կը մնան անտարբերութեան և լուս հանդիսաւեսի դերին մէջ, և անհիմ առարկութիւններով կը վարանին վաւերացնել վերոյիշեալ Յանձնախումբին կազմութիւնը: